# ՊԱՏՄԱԲԱՆ Ա. ԲԱՆԱԵԱՆԻ ՇՈՒՆԴԱԼԻՑ ԳԻՐՔԸ

Մեծ հեռաբերբութիւն ըստանցեց վերջերս Երեւանում լոյս տեսած Դոկտոր Ա. Բանանեանի գրքոյկը Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան մասին։

Մի զարգացիչ տալու համար մի գաղափար Նորութիւնների մասին, սարսեւ ընթերցողին կը ներկայացնենք նրանցից մի քանի էական գծեր։

... Անհատի պաշտամունքի երկար չէր անում, սովետ պատմաբանը միշտ էլ չէ կարողացել ազատվել հայացքով մօտենալ պատմական դէպքերին, մարքսիստական տեսակէտով վերլուծելու տալու նշանակութիւնն ունեցող քաղաքական պատերին։ Ը. ուշադրութիւնից երբեմն վրիպել են իրաւաբանութիւնների տրամաբանական կապակցութիւնը եւ նրանց պատմական դերը։ Ասելի՞ն, սովետական պատմաբանը, հանդիսանալ պատմաբանների, շատ անգամ գնա՛ գրքերի դեղերի է թաղում իրողութիւններ եւ վիճաբանութիւններ։

Մատնանշեմ այս կերպը, մասնաւորապէս նախառեւոլուցիոն Հայաստանի դէպքերի առնչութիւնը, ստեղծել է մի քանի մի մեծ անհարութիւն, որոնցմէ լայնօրէն օգտուել են հայ ժողովրդի ուխտալ թշնամի նաւցիոնալիստ դաշնակները։ Նրանք առանց խղճաբութեան իւրացրել են հայ կոմունիստների աշխատանքով եւ արիւնով շահուած ժողովրդական յաղթանակները։

Դոկտոր Ա. Բանանեանը լուրջ վերանայութեան է ենթարկել 1915–1921թ. փոթորկալի տարիների իրադարձութիւնները նախավերջին Հայաստանում, եւ վերաժեւորել հայ կոմունիստների բախտորոշ դերը ազատագրական պայքարում։ Նրա մեծարժէք աշխատութիւնը միանգամայն ընդգծում է ՀՍԴՀ-ական դերը եւ չպէտք դաշնակ տերաշնչակ մաւզերիստներին, պատմութեան էջերից։

Գրքի առաջին մասը յատկացուած է 1915 թուականի ջարդերին, Թրքահայաստանում։

Օսմանեան իմպերիալիզմի եւ ռեակցիայի մութ ուժերը, սարսափած հայ կոմունիստների շարժումից, լիկվիդացիայի ենթարկում են նրանց դեկավար ընկերներին, ջարդում են պարտիայի պատասխանատուներին եւ մտաւորականներին։ Յետոյ, անդրադառնալով քշում են Արաբիոյ անապատները ուր փճանում են ութի՝ քան մէկ միլիոն հայեր։

Դոկտոր Ա. Բանանեանը պատմական անժխտելի փաստերով ապացուցանում է Ֆրանսա-անգլիա-գերմանա-ամերիկեան իմպերիալիզմի մեղակցութիւնը օսմանեան ֆէոդալիզմի հետ, եւ մերկացնում է նրանց ակէնդ դաշնակների խաղացած անարդ դերը։ Հանդիսատ բաղմած Գալոյ Գարէնիերում եւ սուլթանական պալատներում, դաշնակները անարդ դիակապուտների նման իւրացնում են նահատակ կոմունիստ մտաւորականներին։ «Դաշնակ» են մկրտում պրոկիսիս բանասեղծ Սիամանթոյին, ճնունդ ազգային պայքարը չեփորող Դանիել Վարուժանին, ռեակցիայի դրօշ պարզած Ռուբէն Զարդարեանին, Սեւակին եւ ուրիշներին։ Որպէսզի չների նման մրցում են անվ-տուն եւ Իթթիհատական բարեկիներուն մատնում պրոկիսիս հայերին, չնայելով անպամ ժողովրդական անմահ երգչաստեղծ Կոմիտաս Վարդապետ...

Բայց միջազգային իմպերիալիզմի ստրկամիտը բարձրագոյն բարեում է հայ պրոլետարիատի դեմ։ Հայ կոմունիստներ։ Հեղինակը հանգամանորէն գրաւուած ռեակցիոնական ուժերին մասին, Ուրֆայում, Հարիրում, Շապին Գարահիսարում, Ձերէջ-Մուսայում։ Օսմանեան Ֆէոդալիզմի եւ ռեակցիայի դաշնակից Ֆրանսիական իմպերիալիստական ուժերը Ձերէջ-Մուսայի ապստամբ աշխատաւորութիւնը բռնութեամբ փոխադրում են Եդեսիա եւ էջզոբացնում։ Հերոսամարտը աւելի յաջող ելք է ունենում Վան քաղաքում, ուր հայ կոմունիստները, շնորհիւ ռուս մեծ ժողովրդի օգնութեանը, փչրում են իմպերիալիստ բանակների պաշարման օղակը։ Նրանց դեկավարը, Արամ Մանուկեան, ժողովուրդը փոխադրում է Հիւսիս, ազատելով բնաջնջուելու վտանգից։

Գրքի երկրորդ եւ շատ աւելի կարեւոր մասը յատկացուել է 1918թ. Մայիսեան դէպքերի վերարժեւորման։

Մի թիւր կարծիք, երբեմն ընդունուած մե՛ր իսկ կողմից — ա՛յն է՝ որ Յեղափոխական Ռուսաստանը «եղբայրական» ձեռք է երկարել Թուրք ազատարարներին։ Պատմաբան Ա. Բանանեանը սպառիչ փաստերով հաստատել է, որ դա մի անհեթեթ եւ խոշոր սուտ է, հնարուած կեղծարար դաշնակների կողմից։ Այո՛, ճիշդ է, Լենինը եղբայրութեան կոչ էր ուղղում աշխարհի բոլոր պրոլետարներին։ Այո՛, եւ ինչո՞ւ չէ, Լենինը եղբայրութեան կոչ է ուղղել նաեւ Թուրք աշխատաւորներին։ Ա՛խր, ինչպէ՞ս կարելի է չփոթել Թուրք ազգիս պրոլետարիատը Թուրք զիշատիչ սակեարի հետ...

Օգտուելով ռուսական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ ստեղծուած կացութիւնից, Թուրք ազէսորների բանակը, առաջնորդութեամբ դաշնակ վալատների եւ աւազակամարերի, ներխուժել էր Հայաստան։ Դա բացայայտ պատմական ճշմարտութիւն է։

Բայց հայ կոմունիստները կազմակերպում են ժողովրդական դիմադրութիւնը։ Անատաս Միկոյեանի, Արամ Մանուկեանի, զօրավար Սիլիկեանի եւ Դրաստամատ Կանայեանի դեկավարութեամբ, տասնեակ հազարաւոր կոմունիստ մարտիկներ եւ աշխատաւորներ պարզում են յեղափոխութեան դրօշը, զէնք են վերցնում եւ դնում ռազմաճակատ։ Բաշ-Արարատի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի բախտորոշ ճակատամարտներում պարտում է Թշնամին եւ գլխիկոր ետ քաշւում։ Ի սպառ բնաջնջում են նաեւ հայ ժողովրդի ոխերիմ Թշնամի նացիոնալիստ դաշնակ պանթուրքիստները։ Ժողովրդական յաղթանակի ցնծութեան մէջ հռչակւում է Հայաստանի անկախութիւնը, 1918 Մայիս 28ին։

Վե՛րջապէս իրականանում էր հայ ժողովրդի դարաւոր երազը — ազատուել օտար լծից եւ սեփական հայրենիքի մէջ կերտել լուսաւոր ապագայ։ Հինգ տարուբ տարուայ ընդմիջումից յետոյ՝ վերականգնում էր հայ պետականութիւնը։ Իրականում էր նաեւ ազգերի ինքնորոշման Լենինի տեսութիւնը։ 28 Մայիսի դեմոկրասին հանդիսանում էր առաջին էտապը։ Զէր ուշանալու եւ երկրորդ էտապը, սոցիալիստական կարգերի հաստատումը։

Իսկապէս՝ հազիւ երկուքուկէս տարի էր անցել, 1920 Նոյեմբերի 29ին Հայաստանի Հանրապետութիւնը վերածուեց սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի եւ այդ օրից մաս է կազմում Խորհրդային մեծ Միութեանը։

Ամերիկեան տոպարներով վերակենդանացած դաշնակ սապոտէօրները ամէն միջոցի դիմեցին արգելելու համար երկրորդ էտապի իրականացման պրոցէսը։ Նրանց յաջողուեց կարճ ժամանակի համար իշխանութիւնը զաւթել եւ իրանց հօրդաչ Թրքերին Հայաստան հրաւիրել։ Ճանապարհը բաց անելու համար ապրէսորների առաջ՝ նրանք վտարեցին ապահովեցին հերոս գնդապետ Մազմանեանին, կազմալուծեցին հայ բանակը, Թշնամուն յանձնեցին Կարսը։

Բայց հայ կոմունիստները, ռուս մեծ ժողովրդի օգնութեամբ՝ մի անգամ եւս բարձրացուցին դասակարգային պայքարի դրօշը 1920թ Մայիսին եւ մի անգամ եւս բնաջնջեցին հայ ժողովրդի Թշնամի պուժուա-նացիոնալիստ դաշնակներին։

Ա. Բանանեանը իրաւամբ երկար ծանրանում է 28 Մայիսի պատմական ակտի վրայ եւ ջախջախիչ փաստերով ապացուցում, որ տերմէնական Բերիայի արվերքով՝ հայ կոմունիստները չեն կարողացել նշել ժողովրդական այդ փառաւոր յաղթանակը։ Լեման քառասունամեայ տարի մենք «մոռացել» ենք Սարդարապատի հերոսամարտը եւ Մայիսի 28ի պատմական ակտը։ Անհատի պաշտամունքի շրջանում եթէ պատահմամբ նշուել են դրանք, մեղանում այդ համարուել է... նացիոնալիստական աւանդութիւն։ Ասիթից օգտուելով, դաշնակները, արտասահմանում, ամէն տարի չթող հանդիսութիւններ են կազմակերպել, իրենց-իրենց փառաբանել, «Յիսնամեակ» ասնել, ուրիշի փեսուներով պարարուել... Իսկ հայ ռամկավարներն ու հնչակեանները մի «անհասկանալի» թեթեւամտութեամբ՝ Հայաստանի Անկախութեան պատիւը բախշիշ են արել դաշնակներին։ Լռել ենք լման քառասունամեայ տարի եւ դրա հետեւանքը՝ այսօր Խորհրդային Հայաստանում՝ անգամ կոմունիստներ, 1918–1920թ Հայաստանի Հանրապետութիւնը... դաշնակ են անուանում։ Ա. Բանանեանը մարքսիստում է պատմութիւնը և մերկացնում դաշնակ ենթափոխներին։

Գրքի երրորդ եւ վերջին մասը վերաբերում է 1921թ դէպքերին։

Խորհրդային Հայաստանի ընթերցողին գրեթէ անծանօթ են 1921թ Փետրուարեան խռովութիւնները, որոնց լուրջ, Արտասահմանում ստեղծուել է մի խոշոր միտոլոգիա։ Իբր թէ երկրի սովետականացումից անմիջապէս յետոյ «բռնութիւններ» են տեղի ունեցել... թէ՝ մի քանի տասնեակ դաշնակներ կացինահարուել են Երեւանի բանտում... թէ՝ ժողովուրդը ապստամբել է եւ երկրից վտարել հայ կոմունիստներին... Թէ՝ կարճ ժամանակի համար իշխանութիւնը անցել է դաշնակ աւազակների արիւնոտ ձեռքերին... Թէ՝ հայ կոմունիստները ռուս մեծ ժողովրդի օգնութեամբ վերադարձել են Խորհրդային Հայաստանը եւ ի սպառ բնաջնջել ժողովրդի Թշնամի դաշնակներին... Թէ՝ մի քանի աւանտուրիստների յաջողուել է փախչել Պարսկաստան եւ իրանց հետ տանել պետական արխիւները...

Իրականութիւն է եւ պատմական Ա. Բանանեանը ստանձնութեամբ փաստում է, որ սոցիալական կարգերի հաստատումից յետոյ, Հայաստանում ա՛ռեղ չկար պուրժուա-նացիոնալիստների համար, բացի Երեւանի բանտից։ Կարող է լինել որ մի քանի սոբրագործ, փոխանակ դնդակահարուելու՝ կացինահարուած լինեն։ Դա անշուշտ չնչին մանրամասնութիւն է։

Իրականութիւն է նաեւ, որ 1921թ Փետրուարին կարգ մը խրամատութիւններ են տեղի ունեցել եւ ուրեմն օգտուելով իմպերիալիզմի վարձկան դաշնակներ յարձակուել պետական հաստատութիւնների վրայ, դողացել մի քիչ փող եւ կառավարական արիւներ։ Պարզ քրէական արարք, ինչպիսին պատահում է ամէն օր Շիկագոյում եւ Ֆար Վէստում։ Բայց այդ արխիւներն ու Թղթերը օգտագործելով եւ ենթափոխելով է որ կանկատէրների պարագլուխ Կարօ Սասունին եւ ամերիկեան գործակալ Սիմոն Վրացեանը անհաշիւ յուշեր, ապրումներ, ուսումնասիրութիւններ, յօդուածներ, պանֆլէթներ, գրքեր, պարբերաթերթեր եւ վէպեր են հրատարակել Արտասահմանում, եւ յղփացել պարարտ հոնորարներով... Լեռնակուտակ մի գրականութիւն, որի նպատակն է եղել անշուշտ փող վաստակել եւ յետոյ իւրացնել Մայիսի 28ի Հայաստանի Անկախութեան քաղաքական մեծ ակտը։

Պէտք է ընդունել որ յաջողուել են տարիներով մաքրը մոլորեցնել, օգտուելով այն իրողութիւնից, որ ստորերկրեայ պայքարների ընթացքում փճացել են բազմաթիւ հայ կոմունիստների պարտական անդամատետրերը։ Եղել են նաեւ պարագաներ, երբ հայ կոմունիստը ռեակցիայի ճանկից դուրս գալու համար ինքզինքը դաշնակ է ձեւացրել, դաշնակ ճառ է խօսել, դաշնակ յօդուածներ է գրել, դաշնակ ժողովներ է մասնակցել, դաշնակ աւազակախմբերի մաս կազմել։ Սրանցից կարելի է յիշել յեղափոխական Միհաս Տէր Միհասեանը (*), մանկավարժ Լեւոն Սեդրոսեանը (**), բանաստեղծ Նիկոլ Ադալեանը։ Օգտուել են նաեւ հայ զզուելի բուրժուա ռամկավարների եւ «սոցիալիստ» հնչակեանների մեղակցութիւնից։ Արդէն էլ լման յիսուն տարի երբ թէ պայքարել են դաշնակների դէմ։ Խորհրդում եղել են դաշնակ ակէնտներ եւ մոլորեցրել են միամիտներին։ Ա. Բանանեանը կատարում է լայն մէջբերումներ նրանց մամուլից եւ փաստում, որ լման կէս դար նրանց գլխաւոր դերն է եղել հայ կոմունիստների ժողովրդական յաղթանակները դաշնակներին վերագրել։ Տակաւին այսօր էլ մութ ռեակցիայի եւ բուրժուական կլերիկալի էդ թափփոչները իրանց բարկամ են ձեւացնում կոմունիստ պարտիային։ Շնորհակալ պիտի լինենք Ա. Բանանեանին, որ սթափեցնում է մեզ եւ անհնայ մերկացնում դաւադիր Թշնամիներին։

Եւ ինչպէս արդէն ասացինք, դաշնակները օգտուել են մե՛ր իսկ թոյլ կէցուածքից, երբ անհասի պաշտամունքի շրջանում տերաշնչակ Բերիայի պատճառաւ չենք կարողացել պատմական ճշգ մարութիւնը վերահաստատել։ Ահա ա՛յդ է արել Ա. Բանանեանը իր «Նախառեւոլուցիոն Հայաստանում» գրքում, մեծ հմտութեամբ եւ գիտնականի լրջութեամբ։

Անհամբեր սպասում ենք հեղինակի խոստացած երկրորդ աշխատութեանը, նուիրուած Հայ մեծ մարքսիստ Ռոստոմին։ Դաշնակների համար Ռոստոմը նրանց «կուսակցութեանը» հմմտելիր միստիկ երրորդութեանը մաս է կազմում։ Բայց դուրս է գալիս, որ Ռոստոմը իրականութեան մէջ կոմունիստ գործիչ է եղել իր լման կեանքի ընթացքում... Մարդը պէտք է դատել իր գործից եւ ո՛չ թէ արտաքին խարուսիկ երեւոյթներից։

ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԵԱՆ

(*) Միհաս Տէր Միհասեան աւագանի անունն է Ռուբէն Տէր Միհասեանին (ԽՄԲ.)։

(**) Լեւոն Սեդրոսեանը՝ Լեւոն Շանթն է (ԽՄԲ.)։

Յօդուածագիր մը, Արամ Տիգրանեան, Մայիս 28-ի բացառիկին համար մեզի դրված է զարմանալի գլուխներով լի հետեւեալ գրաբիւնը։

Տիգրանեան կը խօսի Հայաստանի մէջ նոր լոյս տեսած «Նախառեվոլուցիոն Հայաստանում» անուն ինչ-որ գիրքի մը մասին, որ, ինչպէս պիտի կուգի ընթերցողը, գոյութիւն ունի զայն ստորագրողին երեւակայութեան մէջ միայն։ Դաշնակցութեան դէմ շղթայազերծուած յիսնամեայ պայքարին էութիւնը ըմբռնած եւ պայքարի ոգերը լաւապէս իւրացուցած մէկու մը հարուստ փորձառութիւնը կը բերէ այս գրութիւնը եւ ունի երգիծական ընոյթ մը, մօտաւոր զայիքը նախատեսելու հաւանական խորէ մը։ Արդարեւ, երբեմ մի զարմանամ, եթէ վաղը մարդիկ գտնուին ու ըսեն ա՛յն, որ ամենայն լրջութեամբ ըսած է Ա. Բանանեան մկրտուած Արամ Տիգրանեանի երեւակայական այս «գոգենդ»ը։ Անհերեթի է Դաշնակցութեան գործը, անոր մեծ զաւակներուն գեկավարութեամբ կերտուած Մայիս 28ը, եւ այդ անհերեթելիին մէջ բաժին ունենալու համար՝ մարդիկ ուրիշ միջոց չունին, եթէ ոչ հերեթել Դաշնակցութեան դերը, խեղաթիւրել, ենթգնտեսել, սեւցնել, ինչպէս ըրած է Տիգրանեանի սեւ երգիծանիին բաւական առատ նիւթ հայթայթած «Ա. Բանանեան»...

Կարդացէք։ Զուարթ գրաբիւն է։ Զուարթացէք պահ մը...

ՔԵՌԻՆ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ